

ԱՊԱԳԱՅ

ԽԳ. ՏԱՐԻ ԹԻ 2403 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 25 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2023
• VOL. XLIII, NO 2403 • 25 SEPTEMBRE 2023 • MONDAY, 25 SEPTEMBER 2023



Entrusted for over 25 years

Journey Home™ coverage included with new pre-arrangement contracts* (\$595 value)

www.komitas.ca (514) 331-0400



ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐՅԱՆ՝ ՀԱՅՈՅ ԱՇԽԱՐՀԸ ԱՅՍՕՐԵՐՈՒՄ Կ'ԱՊՐԻ ԳԵՐՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ, ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՏԻՆ ՊԱՅԵԼ ԳԵՐԱՉԱԼՈՒՐՁ ԿԵՅՈՒՍԺՔ ԳՎՏԱՆԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԳՈՅՈՒԹԻՒՆԸ



Թանկագին ընթերցող հայրենակիցներ, «ԱՊԱԳԱՅ»-ն իր այսօրուայ թիվը կը հրատարակե ազգային արտասովոր պայմաններու մէջ: Արդարեւ քաղաքական կացութիւնը Արցախի եւ Հայաստանի մէջ անկայուն է եւ ենթակայ է օրէ օր եւ նոյնիսկ ժամէ ժամ կարելոր փոփոխութեանց: Հետեւաբար մեր այսօրուայ հրատարակած տեղեկութիւնները եւ լուրերը կրնան վաղն իսկ փոխուած վիճակներու մէջ գտնուիլ: Պարտինք հաւաքաբար այս օրերուն դրսեւորել աշխրջութիւն եւ միասնականութիւն գորավիզ կանգնելու համար հայրենիքին եւ մեր ժողովուրդին: «ԱՊԱԳԱՅ»

ԱՏՐՊԵՅՃԱՆԸ ԱՐՅԱՆԻ ՏԱՐԲԵՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒ ՈՒՂՈՒԹԵԱՄ ԶԵՌԱՐԿԱԾ Ե ԼԱՅՆԱԾԱԲԱԼ ՅԱՐՁԱԿՈՒՄ

Երեքշաբթի՝ 19 Սեպտեմբեր 2023-ին, ժամը 13-ի սահմաններուն, ատրպէյ-ճանական զինուժը շփման գիծի ամբողջ երկայնքով իրականացնելով հրթիռահրետանային նախապատրաստութիւն, փորձած է յառաջանալ Արցախի Պաշտպանութեան բանակի պաշտպանութեան խորքը, հաղորդած է Լեռնային Ղարաբաղի ռազմական գերատեսչութիւնը:

«Իրային զօրքերը ցուցաբերած են յամառ դիմադրութիւն», ըսուած է հաղորդագրութեան մէջ:

Ըստ Արցախի արտաքին քաղաքական գերատեսչութեան՝ հաւաքագրուած տուեալներուն համաձայն՝ կայ բազմաթիւ զոհեր եւ վիրաւորներ:

Ղարաբաղեան կողմը դիմած է ատրպէյճանական կողմին՝ անյապաղ դադարեցնելու կրակը եւ ստեղծուած իրավիճակը հանգուցալուծելու նպատակով նստելու բանակցութիւններու սեղանին շուրջ, յայտնած է Արցախի տեղեկատուական շտապը:

Ռուսաստանը հակամարտող կողմերուն կոչ րած է դադարեցնելու արիւնահեղութիւնը Ղարաբաղի մէջ եւ վերադառնալու դիւանագիտական կարգաւորման, յայտնած է Արտաքին Գործերու նախարարութեան խօսնակը:

Միւս կողմէ, Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութիւնը յայտարարած է, որ Ղարաբաղի մէջ «հակաահաբեկչական գործողութիւններ» կը սկսի, այդ շարքին՝ «վերականգնելու Ատրպէյճանի հանրապետութեան սահմանադրական կարգը»:

Նախքան յարձակումը, Պաքուն Արցախի Հանրապետութեան Պաշտպանութեան բանակը մեղադրեց սադրիչ գործողութիւններ իրականացնելու համար, որուն հետեւանքով երկու տարբեր պայթուումներ իբր 6 ատրպէյճանցի զոհուած է, ապա յայտարարեց Ղարաբաղի մէջ «հակահաբեկչական գոր-



ծողութիւններու» մեկնարկի մասին:

«Ղարաբաղի տնտեսական տարածաշրջանին մէջ լայնածաւալ սադրանքները ճնշելու, հայկական զինուած ուժերու զինաթափումն ու մեր տարածքներէն դուրսբերումը, ռազմական ենթակառուցածքները չեզոքացնելու, բրոնազարաւումէն ազատագրուած տարածքներ վերադարձող քաղաքացիական բնակչութեան, շինարարական վերականգնողական աշխատանքներու մէջ ներգրաւուած քաղաքացիական ծառայողներու եւ մեր զինուորականներու անվտանգութիւնն ապահովելու, ինչպէս նաեւ Ատրպէյճանի հանրապետութեան

Շար. - էջ 3

ԵՐԵՒԱՆԻ ԱԲԱԳԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ ՈՉ ՄԵԿ ԲԱՂԱՔԱԿԱՆ ՈՅԺ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԵԱՆ ԿՐՅԱՒ ՏԻՐԱՆԱԼ

Կիրակի՝ 17 Սեպտեմբեր 2023-ին, տեղի ունեցած Երեւանի ընտրութեանց նախնական արդիւնքներով աւագանի կազմ անցած ուժերէն որեւէ մէկը չկրցաւ կազմել մեծամասնութիւն եւ չի կրնար ստանալ քաղաքապետի աթոռը:

Աւելի քան 234 հազար ընտրողներու ձայները բաշխուած են հետեւեալ ձեւով. «Քաղաքացիական պայմանագիր»-ը ստացած է աւելի քան 75 հազար քուէ կամ ձայներուն 32,5 տոկոսը, «Ազգային առաջընթաց»-ը՝ աւելի քան 43 հազար քուէ կամ ձայներուն 18,9 տոկոսը, «Մայր Հայաստան» դաշինքը՝ 15,4 տոկոսը, «Հանրապետութիւն»-ը՝ 11,3 տոկոսը, «Հանրային ձայն»-ը՝ 9,7 տոկոսը: Միւս կուսակցութիւններուն հաւաքած ձայները անցողիկ 4 տոկոսէն պակաս էին:

Վերջնական արդիւնքները Կեդրոնական ընտրական յանձնախումբը պիտի հրապարակէ 24 Սեպտեմբերին՝ քուէարկութենէն 1 շաբաթ ետք, այդ ժամանակ պարզ պիտի ըլլայ նաեւ ամէն մէկ

քաղաքական ուժի ստացած տեղի վերջնական բաշխումը, մինչ այդ ընտրական օրէնսգիրքին մէջ եղած բանաձեւի ու քուէարկութեան նախնական թիւերու միջոցով կարելի է ստանալ հետեւեալ պատկերը. Երեւանի աւագանի 65 տեղերէն 24-ը կը ստանայ «Քաղաքացիական պայմանագիր»-ը, 14-ը՝ «Ազգային առաջընթաց»-ը, 12-ը՝ «Մայր Հայաստան»-ը, 8-ը՝ «Հանրապետութիւն»-ը եւ 7-ը՝ «Հանրային ձայն» կուսակցութիւնը:

«Շեմը յաղթահարած քաղաքական ուժերը պիտի սպասեն մինչեւ գործող աւագանիի լիազօրութիւններու աւարտը՝ 10 Նոկտեմբեր: 10 Նոկտեմբերին նորընտիր աւագանին պէտք է գումարէ առաջին նիստը, եթէ որեւէ քաղաքական ուժ չունի 50+ աթոռ, ապա այդ պարագային արդէն աւագանին պէտք է երկշաբաթեայ ժամկէտի մէջ ընտրէ քաղաքապետ», յայտնեց Կեդրոնական ընտրական յանձնախումբի նախագահ Վահագն Յովակիմեան:



Եթէ այս 2 շաբթուան ընթացքին աւագանիի անդամները չկարողանան համաձայնութեան գալ եւ ընտրել քաղաքապետ, աւագանիի ընտրութիւններու նոր թուական պիտի որոշուի: Մինչեւ լուրին հաղորդումը՝ քաղաքական ուժերը կը խօսէին հաւանական համաձայնական դաշինքներու մասին:

ՍԱ ԽԱԽԱՄՆԵՐԸ ԻՆՉՈ՛Ւ ԿԱՏՂԵՑԱՆ

ՅԱԿՈՒ ԱՐԵՏԻՔԵԱՆ

Քեյնսըն (Գերմանիա) ստացուած գրութիւն մը, կը տեղեկացնէ, թէ Եւրոպայի Ռապաբլիսական կեդրոնը (Rabbinical Centre of Europe), կրճատ՝ RCE, նամակ մը յղեր է Հայաստանի ղեկավարութեան՝ հայ ժողովուրդէն պահանջելով «անյապաղ եւ ամբողջովին դադարեցնել Ցեղասպանութիւն բառին գործածութիւնը», յատկապէս երբ հարցը կը վերաբերի Ատրպէյճանի կողմէ Արցախի ինսամստայ պաշարումին: Ու կարծես քիչ ըլլար այդ պահանջը, RCE-ի նամակը բացայայտօրէն կ'անտեսէ 1915 թուականի Հայոց ցեղասպանութիւնը՝ սահմանելով, որ «սարսափեցնող արտայայտութիւնները պատշաճ են միայն «նպատակային, հետեւողական (systematic) եւ լայնընդգրկուն այն ցեղասպանութեան համար, որ մարդկութեան պատմութեան ընթացքին տեղի ունեցած է, որով տառապած է հրեայ ժողովուրդը: «Հոլոքոսթը»:

RCE-ի նամակը, որ մէկ այլ տեղեկութեամբ Եւրոպական 20 երկիրներէ շուրջ 50 ռապաբլներու կամ խախամներու հաւաքական կարծիքը եւ ուղղուած է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանին եւ նախագահ Վահագն Խաչատուրեանին, աւելի եւս առաջ երթալով կը բացայայտէ հրեայ կրօնաւորներուն պոչի ցաւը՝ քաղաքական դիրքորոշումն ալ, երբ որպէս օրինակ հայոց «անընթացակառուցեան» եւ «սխալակառուցեան» կը վկայակոչէ աւելի քան 9 ամիսէ ի վեր արցախահայութեան պարտադրուած տառապանքը ցեղասպանական արարք բնութագրելը, ու տակաւին՝ կը դատապարտէ հայ ժողովուրդը Ցեղասպանութիւն եզրոյթը «քաղաքական նպատակներով» շահարկելու համար, մինչդէռ, նամակագիրներուն կարծիքով, տեղի ունեցածը ընդամենը Ատրպէյճանի ներքին խնդիր է, կամ իրենց բառով՝ conflict-ը:

Աւելցնենք նաեւ, որ RCE-ն նախապէս մէկ այլ առիթով պաշտօնապէս քննադատեր էր Ատրպէյճանը դիւանա-ցընելու (demonization) փորձերը եւ Հայաստանը համարեր էր «Թեհրանի այաթոլլահներուն դաշնակից»...

Այսպիսով՝ Եւրոպայի հրեայ կրօնաւորներուն «պոչի ցաւերը» դարձան երեք հատ, առայժմ:

Եզրոյթին իրենց մեկնաբանութեամբ՝ միայն Հոլոքոսթն է արժանի ցեղասպանութիւն կոչուելու, հետեւաբար մը-նացեալները, ներառեալ Արցախի արգելափակումը, արաբական արտայայտութեամբ՝ «ֆրաթ», մանրուք բաներ են:

Արցախի մէջ եւ շուրջ տեղի ունեցող իրադարձութիւնները Ատրպէյճանի ներքին խնդիրները կը հանդիսանան, որմէ կարելի է հետեւցնել, թէ «ներքին» այդ խնդիրն ոչ որ իրաւունք ունի խառնուելու:

Հայաստանը, հետեւաբար նաեւ հայերը, Իրանի Իսլամական հանրապետութեան բարեկամներն են, ուստի՝ Իսրայելի պետութեան հակառակորդները:

Ցեղասպանութիւն եզրոյթի սահմանման հարցը հոս քննարկելը, աւելի եւս՝ վիճարկելը, բոլորովին աւելորդ կը նկատուի: Հրեայ խախամներուն չար բախտէն՝ այդ եզրոյթի լաւագոյն մեկնաբանութիւնը տուած են հրեայ գիտնականները՝ Լեմբինէն սկսեալ մինչեւ Իսրայել Չառնի եւ ուրիշներ: Խախամները Թալմուդէն բացի պէտք է կարդան անոնց աշխատութիւնները եւ յետոյ միայն բարբաջեն:

Պաշարուած եւ սովամահութեամբ ցեղասպանութեան դատապարտուած արցախահայութեան վիճակը լաւագոյնս բնութագրողը Միջազգային դատարանի նախկին գլխաւոր դատախազ, մեծահամբաւ իրաւագետ Լուիս Մորենո Օքամպոն է եւ ոչ թէ մենք: Հետեւաբար խախամները անոր պէտք է ուղղեն իրենց քննադատութեան սլաքները:

Ինչ կը վերաբերի Թեհրանի այաթոլլահներու դաշնակիցը ըլլալու հարցին՝ խախամներուն խորհուրդ պէտք է տալ իրենց քաղաքական եւ միայն քաղաքական հարցերը Պարսկաստանի հետ՝ մեր միջոցով ու մեր երկրի միջոցով չփորձել լուծել: Պարսկաստանն ու պարսիկ ժողովուրդը մեր դրացիները եղած են պատմութեան



անյիշելի ժամանակներէն մինչեւ օրս: Խախամները պէտք է միշտ յիշեն, որ իրենց «Աւետեաց երկիրն» էր, Իսրայելը, որ թուրք շէյխերուն եւ իմամներուն հետ ձեռք-ձեռքի տուած յարձակեցան մեր վրայ վերջին պատերազմին, եւ հիմա ալ պատրաստ են նոյնը ընել, եթէ չվախնան «Թեհրանի այաթոլլահներէն»:

Մէկ կողմ թողլով խախամներուն ցեղապաշտական-ռասիստական նկրտումները Հոլոքոսթը ֆէթիշացնելու եւ 2-րդ համաշխարհային պատերազմի ընթացքին հրեայ ժողովուրդին թափած արիւնն ու տառապանքը քաղաքական ու քարոզչական դրամագլուխի վերածելու, ատենն է անոնց յիշեցնելու, որ հայ ժողովուրդը հրեայ ժողովուրդին մէջ, յատկապէս Սփիւռքի տարածքին համախոհ շատ բարեկամներ ունի, որոնք, վստահ եմ, անպատասխան պիտի չթողուն RCE-ի ցափռուածութիւնը:

Յօդուածին սկիզբը ըսուեցաւ, որ RCE-ի նամակ-յայտարարութիւնը ուղղուած եղած է ՀՀ վարչապետին ու նախագահին: Արդ, մենք չենք գիտեր, թէ հայ պաշտօնեաները ինչ պատասխան տուած են այդ նամակ-հրահանգին, եւ ընդհանրապէս չենք գիտեր, թէ որեւէ նամակ-պատասխան տրուած է ռապաբլներուն: Սակայն անհրաժեշտ կը նկատենք տեղեկացնելու, որ RCE-ի նամակը բնաւ պատահական չէ: Փաստ՝ ճիշդ այս օրերուն հրապարակուեցաւ Ատրպէյճան «այաթոլլահ» Շիւքրիզատի կոչը՝ ուղղուած հայաստանաբնակ հրեական համայնքին՝ փոխադրուելու Պաքո, այն փոքրաթիւ եւ յարգուած համայնքը, որ աւելի քան 150 տարիէ ի վեր հաստատուած է Հայաստան, եւ գիտութեան, արուեստի եւ այլ ասպարէզներու մէջ յաջողած ներկայութիւն մը կը կազմէ:

Ատրպէյճանի կրօնապետին այդ կոչը, իմ կարծիքով, կրնայ նախագգուշական հանգամանք մը ունենալ, որով, կը խորհիմ, մեր երկրի համապատասխան մարմինները պէտք է զբաղին: Եւ ոչ միայն այդ մարմինները: Խնդրոյ առարկայ եւ յարակից հարցերով պէտք է զբաղին նաեւ Սփիւռքի մեր այն ազգակիցները, որոնք կապեր ունին հրեայ կազմակերպութիւններու, անհատներու եւ կրօնականներու հետ: Հարցը մեզի համար կարելի է թէ քաղաքական, թէ քարոզչական եւ թէ այլ տեսակետներէ:

Պէտք է գտնենք հարցի բանալին՝ խախամները յանկարծ ինչո՞ւ կատղեցան:

Երեւան
«ՊԱՅՔԱՐ» շաբաթաթերթ

ԱՅ ՄԻՊ. « ԱՐՑԱԽԻ ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ ՄՆԱՅԱԾ Է ԱՌԱՆՑ ԵՆԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ, ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՒ, ՍՆՈՒՆԴԻ ԵՒ ՉԵՌՈՒՑՄԱՆ»

Ատրպէյճանը կը շարունակէ թիրախ դարձնել Լեռնային Ղարաբաղի քաղաքացիական բնակչութիւնը: Այս մասին X ցանցի միջոցով կը յայտնէ Արցախի մարդու իրաւունքներու պաշտպան Գեղամ Ստեփանեան՝ նշելով, որ Արցախի շատ բընակիչներ ցուրտ ջերմաստիճանի պայմաններուն մէջ մնացած են առանց լոյսի, ուտելիքի եւ ջեռուցման:

«Արցախի ամբողջ բնակչութիւնը կը շարունակէ մնալ ասպատանարաններու մէջ առանց ելեկտրականութեան, հաղորդակցման միջոցներու, մնունդի եւ ջեռուցման՝ ցուրտ ջերմաստիճանի պայմաններուն մէջ: Ատրպէյճանը կը շարունակէ թիրախ դարձնել քաղաքացիական ենթակառուցուածքները եւ քաղաքացիական բնակչութիւնը՝ օգտագործելով ռազմական թռիչքներ, հրետանի եւ անօդաչու թռչող սարքեր», - յայտնած է Արցախի ՄԻՊ-ը:



Hebdomadaire Arménien
Armenian Weekly ISSN 0382-9251

Publié par /Published by
Le Centre de Publication Tékéyan
825 rue Manoogian, Saint-Laurent,
Québec H4N 1Z5

Tél: (514) 747-6680 • FAX: (514) 747-6162
e-mail: abaka@bellnet.ca
www.tekeyanmontreal.ca

Պատասխանատու խմբագիր՝
ԱՐԵՏԻՍ ՂՎԳՂՍԵԱՆ

Ծանուցումներու
նուիրատուութիւններու եւ
գրասենեակի պատասխանատու՝
ՍԱԼԲԻ ՄԱՐԿՈՍԵԱՆ

Թորոնթոյի պատասխանատու՝
ՄԱՏԱԹ Բ. ՄԱՍՈՒՐԵԱՆ

Canada
2nd Class \$80 (QC & ON)
1ère classe/first class \$150
U.S.A. 1st class (US) \$150
Autres pays/Other countries:
1st class (US)\$120
Per issue \$1.75
Dépôt légal: Bibliothèque du Québec

PM40015549R10945
TPS/GST - R119209294 • TVQ/PST #1006268699

Financé par le gouvernement du Canada
Funded by the Government of Canada



ՊԱՔՈՒԻ ՀԵՏ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԲՈՐՈՒԹՅՈՒԹՅՈՒՆ ՉԻԿԱՅ



Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչ Դավիթ Մելքումեանը Եվլախի մէջ տեղի ունեցած հանդիպման ասարտին յայտարարած է, որ Պաքոնի հետ վերջնական համաձայնութիւն չի կայ, պէտք է համաձայնեցնել մանրամասները:

Ըստ աղբիւրին՝ Ատրպէյճանի ներկայացուցիչը յայտարարած է, որ ընթացող բանակցութիւնները կարող են յանգեցնել խաղաղութեան պայմանագրի կնքման, որ վերջ կու տայ հակամարտութեան:

Էլչին Ամիրբեկովը Sky News Arabia-ին ալ ըսած է, որ դժուար է ակնկալել բոլոր խնդիրներու լուծումը մէկ հանդիպման ընթացքին:

«Ես կը կարծեմ, որ այսօրուայ բանակցութիւնները Եվլախի մէջ բազմաթիւ սպասուող հանդիպումներէն առաջինն է: Պէտք չէ ակնկալել, որ Ղարաբաղի հայերու և Ատրպէյճանի միջեւ բոլոր խնդիրները հնարաւոր կ'ըլլայ լուծել մէկ հանդիպման ընթացքին», - ըսած է Ամիրբեկովը, եւ աւելցուցած է՝ Լեռնային Ղարաբաղի հայերու հետագայ ճակատագիրը Ատրպէյճանի ներքին գործն է:

ԱՏՐՊԵՅՃԱՆԸ ... Շար. - էջ 1 - ԷՆ

սահմանադրական կարգը վերականգնելու նպատակով, տարածաշրջանին մէջ սկսած են տեղական բնոյթի հակաահաբեկչական միջոցառումներ», ըսուած է Ատրպէյճանի Պաշտպանութեան Նախարարութեան յայտարարութեան մէջ:

Պաքոն կը նշէ, որ ատրպէյճանական կողմը իր գործողութիւններուն մասին տեղեկացուցած է Ռուսաստանի Դաշնութեան խաղաղապահ զօրախումբի հրամանատարութիւնը եւ թուրք-ռուսական դիտորդական կեդրոնին ղեկավարութիւնը:

Ատրպէյճանի նախագահի օգնական չիքմեթ Նաճիբի, իր հերթին, յայտնած է, որ Ղարաբաղի հայերուն ուղարկուած են SMS հաղորդագրութիւններ՝ նախազգուշացնելով հակաահաբեկչական գործողութիւններու մասին:

«Հաղորդագրութիւններուն մէջ հայերուն կը յորդորուէր հեռու մնալ ռազմական կառոյցներէ», ըսած է Նաճիբի:

ԱՐՑԱԽԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԱԾ ԵՆ ԼՈՒԾԱՐԵԼ ԲԱՆԱԿԸ ԵՒ ՔՆՆԱՐԿԵԼ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՀԵՏ ՀԱՄԱՐԿՄԱՆ ՀԱՐՅԸ

Չորեքշաբթի՝ 20 Սեպտեմբեր 2023-ին, Արցախի Հանրապետութեան իշխանութիւնները համաձայնած են լուծարել Արցախի պաշտպանութեան բանակը եւ քննարկել Ատրպէյճանի հետ համարկումի հարցը:

Այս որոշումը յայտարարելէ առաջ Արցախի նախագահը հրաւիրած էր Անվտանգութեան խորհուրդի նիստի, որուն մասնակցած են քաղաքական բոլոր ուժերն ու նախկին նախագահներ Արկաղի Ղուկասեանը, Բակօ Սահակեանը եւ Արայիկ Յարութիւնեանը:

Արցախի Հանրապետութեան նախագահ՝ Սամուէլ Շահրամանեանը որոշումը հրապարակելէ առաջ ըսած էր, թէ Արցախը հարկադրուած պիտի ըլլայ դիմելու համապատասխան քայլերու՝ գերնպատակ ունենալով առաջնահերթօրէն ապահովել բնակչութեան ֆիզիքական անվտանգութիւնը: Ընդունելով կրակի դադրեցման վերաբերեալ ռուսական խաղաղապահ առաքելութեան հրամանատարութեան առաջարկը՝ Արցախի իշխանութիւնը յայտարարեց, որ պայմանաւորուածութիւն ձեռք բերուած է՝ առաջին՝ երկ կէսօրէ ետք ժամը 1:00-էն սկսեալ ամբողջութեամբ դադրեցնելու ռազմական գործողութիւնները, երկրորդ՝ ռուսական զօրակազմի տեղակայման վայրէն հանել, ինչպէս ձեւակերպուած է, «Հայաստանի զինուած ուժերու մնացեալ ստորաբաժանումները», լուծարել եւ ամբողջութեամբ զինաթափել Արցախի պաշտպանութեան բանակը, ինչպէս նաեւ դուրս բերել ծանր զինուորական սարքաւորումները Լեռնային Ղարաբաղէն՝ զայն արագօրէն ոչնչացնելու նպատակով: Եւ երրորդ՝ համաձայն ձեռք բերուած պայմանաւորուածութեան՝ Ատրպէյճանի կողմէ բարձրացուած համարկումի, Լեռնային Ղարաբաղի հայերու իրաւունքներու եւ անվտանգութեան ապահովման, ինչպէս նաեւ Ատրպէյճանի սահմանադրութեան շրջանակներուն մէջ Ղարաբաղի ժողովուրդի կենսագործունեութեան ապահովման հարցերը Ատրպէյճանի իշխա-

ՊԱՔՈՒԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԵՎԼԱԽԻ ՄԷՋ ԿԱՅԱՑԱԾ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԱՐԴԻՆՔՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ



Պաքոն յայտարարութեամբ հանդէս եկած է Եվլախի մէջ Արցախի ներկայացուցիչներու հետ կայացած հանդիպման արդիւնքներու մասին:

Յայտարարութեան մէջ նշուած է, որ կառուցողական եւ դրական մթնոլորտի մէջ կայացած հանդիպումին քննարկած են Ատրպէյճանի սահմանադրութեան եւ օրէնքներու հիման վրայ «Ղարաբաղի հայ բնակչութեան» գործունեութեան կազմակերպման, «վերաինտեգրման», ենթակառուցածքներու վերականգնման եւ գործունեութեան կազմակերպման հարցեր:

Ընդգծուած է նաեւ «հակաահաբեկչական միջոցառումներու» դադարեցման վերաբերեալ Ատրպէյճանի ՊՆ Սեպտեմբեր 20-ի յայտարարութեան մէջ արտացոլուած հարցերու արագ իրականացման կարեւորութիւնը:

Ատրպէյճանի Ղարաբաղի շրջանի հայ բնակիչներու ներկայացուցիչները նշած են վառելիքի անհրաժեշտութիւնը սոցիալական եւ մարդասիրական բնոյթի հարցերու քննարկման համատեքստում: Միաժամանակ անոնք մարդասիրական օգնութիւն խնդրած են, այդ թուում՝ սնունդ: Անոնց խնդրանքը դրական ընդունուած է:

Մասնաւորապէս, կը նախատեսուի յառաջիկային վառելանիւթ տրամադրել եւ մարդասիրական աջակցութիւն ցուցաբերել՝ ապահովելով մանկապարտէզներու եւ դպրոցներու ջեռուցման համակարգերու, ինչպէս նաեւ շտապ բուժ օգնութեան եւ հրդեհաշիջման կարիքները: Նոյնպէս պայմանաւորուածութիւն ձեռք բերուած է յաջորդ հանդիպումը ունենալու մասին: Աւարտին յիշենք, որ հանդիպման ռուսական կողմէն մասնակցած է ռուս-թուրքական համատեղ հսկողութեան կեդրոնի ղեկավար Օլեգ Սեմեոնովը:

նութիւններուն եւ տեղոյն հայ բնակչութեան ներկայացուցիչներուն միջեւ պիտի քննարկուին վաղը՝ ատրպէյճանական Եվլախ քաղաքին մէջ:

Արցախի Հանրապետութեան իշխանութիւնները իրենց այս որոշումը բացատրած են ստեղծուած ծանր իրավիճակով՝ ընդգծելով, որ Ատրպէյճանը, անցնելով լայնածաւալ յարձակման, նպատակ դրած է մասնատել Արցախը եւ անդառնալիօրէն վնաս հասցնել անոր կենսունակութեան:

«Երկու օր տեսած յամառ մարտերու ընթացքին Արցախի զինեալ ուժերու ստորաբաժանումները հերոսաբար կը պաշտպանուին կենդանի ուժով եւ զէնք զինամթերքով քանի մը անգամ գերազանցող թշնամիէն՝ պատճառելով անոր մեծագոյն կորուստներ: Դժբախտաբար, կորուստներ եւ վիրաւորներ ունի նաեւ արցախեան կողմը, իսկ որոշ հատուածներու մէջ թշնամին յաջողած է մխրճուիլ պաշտպանութեան բանակի մարտական դիրքեր, տիրանալ շարք մը բարձունքներու եւ ռազմավարական ճանապարհային հանգոյցներու: Ստեղծուած իրադրութեան մէջ անբաւարար են միջազգային հանրութեան գործողութիւնները՝ պատերազմի դադրեցման եւ իրավիճակի հանգուցալուծման ուղղութեամբ: Հաշտի առնելով այս ամէնը՝ Արցախի Հանրապետութեան իշխանութիւնները կ'ընդունին ռուսական խաղաղապահ առաքելութիւն իրականացնող զօրակազմի հրամանատարութեան առաջարկը կրակի դադրեցման վերաբերեալ», նշուած է յայտարարութեան մէջ:

Հակառակ հրադադարի շուրջ ձեռք բերուած պայմանաւորուածութեան, ժամը 1:00-էն ետք ալ ատրպէյճանական կրակոցները շարունակուած են: Անկախ լրագրող Մարութ Վանեան «Ազատութիւն» ձայնասփիւռի կայանին հաղորդած է, որ ռմբակոծութիւնները դադրած են միայն ժամը 3:00-ի սահմաններուն:

Հոսանք Ստեփանակերտի մէջ չկայ: Կապի խնդիր կայ: Քաղաքին մէջ անորոշութիւն է, յայտնեց արցախցի լրագրողը՝ աւելցնելով, որ շատերը տակաին չեն ընկալած իշխանութեան որոշումը, առայժմ մարդիկ պայուսակները կապած փողոցը այս ու այն կողմ կ'երթան: Չեն գիտեր՝ ուր երթալ, մէկ մասը կ'ուղեւորուի դէպի օդակայան:

Հակառակ անոր որ Արցախի տեղեկատուական շտապը երէկ 2 անգամ արցախցիներուն կոչ ուղղեց չմատնուիլ խուճապի եւ տարհանուելու նպատակով սեփական նախաձեռնութեամբ չերթալ օդակայան, մարդիկ կը շարունակեն ինքնուրոյն ուղեւորուիլ դէպի ռուսական խաղաղապահ զօրակազմի տեղակայման վայր:

Ռուսիոյ պաշտպանութեան նախարարութիւնը երէկ տեղեկացուցած է, որ վերջին 24 ժամերուն ռուս խաղաղապահները Արցախի առաւել վտանգաւոր շրջաններէն շուրջ 2000 խաղաղ բնակիչներ տարհանած են, անոնց կէսէն աւելին՝ 1049-ը, երեխաներ են: Տարհանուողներէն մաս մը ապաստան գտած է խաղաղապահներու տեղակայման վայրին մէջ:

Տաւով կանդադարուանք, որ Ատրպէյճանի նախագահ Իլիհամ Ալիեւ յայտարարած է, թէ նախանցեալ օր սկսած են արդէն «յաջողութեամբ ասարտած հակաահաբեկչական միջոցառումներուն» հետեանքով Ատրպէյճանը վերականգնած է իր ինքնիշխանութիւնը:

Ալիեւ հանդէս եկած է ուղերձով՝ պնդելով, որ ամբողջութեամբ ոչնչացուած է բանակի զգալի մասը, որ Հայաստանի կողմէ ապօրինի տեղակայուած է ատրպէյճանական տարածքներու մէջ եւ տակաին դուրս չէ բերուած՝ հակառակ Երեւանի պարտաւորութիւններուն:

ԻՆՉ ԿՐ ԿԱՏԱՐՈՒԻ ՄՈՍԿՈՒԱ-ԵՐԵՒԱՆ ԳԻԾԻՆ ՎՐԱՅ ԵՒ ԻՆՉ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐՈՒ ՄՊԱՍԵԼ

ՅԱՏՈՒԿ «ԱՊԱԳԱՅ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻՆ

Անցնող ամսի քան տասը օրերու ընթացքին Հայաստանի թիւ մէկ խնդիրը դարձաւ սահմաններուն ստեղծուած լարուած իրավիճակը: Օրեր առաջ երբ Երեւանաբնակ հանրայայտ լրագրող գործընկերոջ մը հետ կը զրուցէի ինծի անգամ մը եւս պարզ կը դառնար, որ ցանկացած պահու Ատրպէյճան կրնայ Նոր պատերազմ մը շղթայագերծել, ոչ միայն Արցախի այլ նաեւ Հայաստանի դէմ:

Միջազգային բեմահարթակին վրայ ստեղծուած դրոյթները եւ ի մասնաւորի Ուքրանիոյ ծանր պատերազմը Ատրպէյճանին տուած են մէկէ ամէկ «բանալի»ներ: Պաքու յենուելով ստեղծուած դրոյթներուն վրայ ու մտածելով, որ այսօր առկայ իրավիճակը անպայման կրնայ փոխուիլ կը շտապէ:

Կը շտապէ բազում ուղղութիւններով, կը խուսանաւէ Հաւաքական Արեւմուտքին հետ, Եւրոպական ցամաքին հետ կը խօսի «նախակազմ»ի խաղաթուղթով, կը բռնէ Անգարայի ձեռքը եւ կը փորձէ Թուրքիա «մխրճել» այս վտանգաւոր խաղին մէջ ու սակայն ամենակարեւորը կ'օգտուի Ռուսաստանի իրավիճակէն ու այդ ուղղութեամբ ալ առաջ կը տանի Երեւան-Մոսկուա որոշակի լարուածութիւնը, որ կարծէք մեր ունեցած «կրակներ»ուն վրայ Նոր վառելանիւթ կը թափէր...:

Խորքային պատկերն այս է այս օրերուն: Ու ճիշդ է այն վարկածը, որ յատկապէս առաջ կը մղուէր հաշուի նստելով այն փաստին հետ, որ Ատրպէյճան ռազմական մեծ քանակի կուտակումներ կը կատարէ մեր սահմաններուն, երեւան կու գայ Նոր

րածելով) կը ներկայացնեմ «ԱՊԱԳԱՅ»ի ընթերցողներուն:

-Պրն. Պետրոսեան Հայ-ատրպէյճանական սահմանին եւ Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծուած լարուածութեան ծիրէն ներս տարածաշրջանային երկիրները աշխուժութիւն կը ցուցաբերեն: Տեղի կ'ունենան փոխ այցելութիւններ եւ հեռախօսազանգեր: Օրերս կայացաւ Թուրքիոյ եւ Հայաստանի ղեկավարներու հեռախօսազրոյցը, մինչեւ այդ էրտողան զրուցած էր Ատրպէյճանի իր պաշտօնակիցին հետ, Իրանի զինուած ուժերու բարձրաստիճան պատուիրակութիւնը Ատրպէյճան էր, Ատրպէյճանի զինուած ուժերու գլխաւոր շտապի պետը Թուրքիա էր: Ըստ ձեզի ինչ կը կատարուի տարածաշրջանին մէջ:



Մեծ լարուածութիւն կայ տարածաշրջանին մէջ, որ ստեղծուած է Ատրպէյճանի կողմէ: Պաքուն ներկայ աշխարհաքաղաքական իրողութիւններու պայմաններուն տակ ուժի սպառնալիքի կիրառմամբ հայկական կողմին եւ Արցախին միակողմանի զիջումներ պարտադրելու հնարաւորութիւն կը տեսնէ: Եւ անոր համար կը ստեղծէ բոլոր հիմքերը՝ օգտագործելով քաղաքական եւ դիւանագիտական գործիքակազմեր:

Մեր տարածաշրջանին մէջ հնարաւոր Նոր պատերազմը եթէ դիտարկենք համաշխարհային իրողութիւններու ռուս-ուքրանական երկրորդ ճակատի բացման առումով, ուրեմն ցանկացած Նոր պատերազմ յղի է վերածուելու խոշորամաշտապ ռազմական գործողութիւններու: Այս է պատճառը, որ տարբեր խաղացողներ գործօն ձեւով կը ներգրուին եւ հայկական կողմն ալ հեռախօսազանգերու միջոցաւ դիւանագիտական քայլերով յաջողեցաւ քանի մը օրով յետաձգել պատերազմը: Ի հարկէ, եթէ առարկայական բանակցութիւններ չսկսին Ատրպէյճանի ու Հայաստանի միջեւ, Ատրպէյճան կրնայ վերադառնալ Նոյն ճնշումներուն Նոյնիսկ անակնկալ կերպով, որովհետեւ արդէն անցեալ շաբաթ պատերազմի շունչը կը զգացուէր:

- Այսինքն, իրական վտանգ կար, այլ ոչ թէ պարզապէս կը սպառնար:

Այո, զուգահեռ գործընթացներով: Ատրպէյճան ուժի սպառնալիքի կիրառման ցուցադրութեամբ կը ձգտի խթանել այնպիսի դիւանագիտական գործընթաց, որուն դիմեց հայկական կողմը: Մեկնելով մամուլի հաղորդագրութիւններէն՝ Հայաստանի վարչապետը իր բոլոր զրուցակիցներուն հետ հեռախօսազրոյցներով Ատրպէյճանի նախագահի հետ բանակցելու պատրաստակամութիւն յայտնած է: Սակայն առանց բանակցային գործընթացի մեկնարկին ալ Ատրպէյճան հնարաւոր է դիմէ ռազմական գործողութեան:

- Կը կարծեմ համաձայն էք, որ այս գործընթացներուն մէջ կարեւոր է Թուրքիոյ աշխուժութիւնը: Դժուար է յիշել դէպք մը, երբ Թուրքիան արցախեան պատերազմէն յետոյ անդրադառնար Արցախի շուրջ եւ Արցախի մէջ կատարուող իրադարձութիւններուն, եւ մանաւանդ Հայաստանի վար-



չապետին հետ հեռախօսազրոյց ունենար: Թուրքիոյ գործունեութիւնը ինչնով կարելի է բացատրել, ինչի կը ձգտի Անգարան:

Նախ դժուար է ըսել, թէ որու նախաձեռնութեամբ եղած է այդ զանգը, երկու տարբերակն ալ հավանական է: Ակնյայտ է, որ Թուրքիոյ համար իրավիճակը բաւականաչափ բարենպաստ է: Թուրքիան կը տեսնէ մեծ հնարաւորութիւններ մեր տարածաշրջանին մէջ իր դիրքերը ամրապնդելու ուղղութեամբ: Բաւական տկարացած են Ռուսիոյ դիրքերը տարածաշրջանին մէջ, եւ Ատրպէյճանի միջոցաւ Թուրքիան կ'ազդէ տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակին վրայ:

Հայաստանի կողմէ ալ կան դրական ուղերձներ ոչ միայն Թուրքիոյ հետ յարաբերութիւնները կարգաւորելու, այլ նաեւ Թուրքիան որպէս գործօն ընդունելու ուղղութեամբ: Յամենայնդէպս, հայկական կողմը բազմիցս նշած է, որ մեր տարածաշրջանին մէջ կարելի չէ հաշուի չառնել Թուրքիոյ գործօնն ու ներկայութիւնը: Միւս կարեւոր հանգամանքը Արեւմուտքի հետաքրքրութիւնն է այս տարածաշրջանով՝ դարձեալ Ռուսիան տարածաշրջանէն դուրս մղելու նպատակադրումով, իսկ այդ հարցով Արեւմուտքի եւ անոր ռազմաքաղաքական դաշնակիցի՝ Թուրքիոյ շահերը կը համընկնին: շեւտաբար Անգարան գործընթացներու վրայ ազդելու համար պիտի օգտուի ցանկացած լարուածութենէ, ինչ որ անոր համար հնարաւորութիւն կը ստեղծէ հասնիլ սեփական դիրքերու ամրապնդման՝ ներառեալ՝ ստանձնել միջնորդի դեր:

- Իսկ հայ-ռուսական յարաբերութիւններու լարուածութեան պարունակին մէջ ինչպէ՞ս կրնաք գնահատել վերոնշեալ գործընթացները: Կարծիքներ կան, որ Ռուսիա չի ցանկար կամ չի կրնար ազդել գործընթացներուն վրայ, ինչպէս նաեւ տեսակէտներ կան այն մասին, որ գուցէ յստակ պայմանաւորութիւն կայ Անգարայի եւ Մոսկուայի միջեւ: Ո՞ր տեսակէտը կը կիսէք:

Շատ լաւ հարց է: Սահմաններու այս լարուածութիւնը որոշ չափով Ռուսիա-Հայաստան յարաբերութիւններու հետեւանք է, որմէ կ'օգտուի Ատրպէյճան: Պաքուն կը հասկնայ, որ լարուածութիւնը ամէկ կը հեշտացնէ իր նպատակներու իրականացումը: Ըստ ստեղծուած իրավիճակն ըստ էութեան «կանաչ լոյս է» յարձակում իրականացնելու համար: Ինչ կը վերաբերի բուն հարցին, իրավիճակը չափազանց մտահոգիչ է եւ պայմանաւորութեամբ է Ռուսիոյ դիրքերու թուլացմամբ, ուքրանական ճգնաժամին մէջ անընդհատ խորանալու իրողութեամբ, ուստի այդ պայմաններուն կ'աշխուժանան կողմնակի դերակատարները, որոնցմէ է Թուրքիան: Աննախադէպ է, երբ լարուածութեան աճի պարունակին մէջ Հայաստանի նախաձեռնած բանակցութիւններուն կը ներգրուի Թուրքիան: Այս արդէն Թուրքիոյ ազդեցութեան ցուցիչ է, եւ այն ալ տարածաշրջանի մը մէջ, ուր սովորաբար ներգրաւորութիւն ունի Ռուսիա:



իրականութիւն մը, որուն անունը առաւելապէս կը կոչուի «Իրանեան գործօն»: Թեհրանի եւ անոր հայաստան քաղաքականութեան ու վճռական մօտեցումներու թեման ի հարկէ այլ յօդուածով մը կարելի է ներկայացնել, սակայն այսօր ամենաեականը այն է, որ մեզի բոլորիս համար դարձած է ամէկ քան մտահոգիչ եւ յուզական...:

Ու հոս է նաեւ, որ կը ծագի հիմնական հարցադրումը, որ կը պարզուի մեր դիմաց այն մասին, որ արդէօք Ռուսաստան պիտի հեռանայ մեր տարածաշրջանէն: Ու եթէ այդ կատարուի, ապա ինչ անակնկալներու եւ դժուար վիճակներու դէմ հանդիման կրնանք գալ ազգովին, կամ իրաւացի է Արեւմուտքը եւ այն պատրաստ է ապահովել Հայաստանի այդքան բարդ դարձած անվտանգութեան խնդիրը:

Այս բոլորին զուգահեռ ու հակառակ վերջին օրերուն տեղի ունեցած Մոսկուա-Երեւան «հրաձգութիւններ»ուն որոշ վերլուծաբաններ միտումնաբէր այն կարծիքը յայտնելու, ըստ որուն ու նաեւ այս փուլին անհնար է պատկերացնել, որ Մոսկուա պիտի հեռանայ Հարաւային Կովկասէն:

Ու այս մօտեցումը անշուշտ դուռը կը բանայ մեծ հարցադրումներու առջեւ, որոնք ուղղակիօրէն կապ ունին Հայաստանի առաջիկայ ընելիքներուն հետ:

Ամէն պարագայի Նոյն այս թեմաներուն մասին օրերս հանրայայտ վերլուծաբան Արմէն Պետրոսեան տուած էր շահեկան հարցազրոյց մը, որուն գլխաւոր հատուածները (արեւմտահայերէնի վե-

ABAKA

SECTION FRANÇAISE

LUNDI, 25 SEPTEMBRE 2023

Une manière réaliste d'atténuer la catastrophe humanitaire du Haut-Karabagh

Écrit en anglais par Benjamin Poghosian et publié dans *The Armenian Mirror-Spectator* en date du 9 septembre 2023

A lors que la crise humanitaire s'aggrave au Haut-Karabagh et qu'il n'y a aucune lumière au bout du tunnel, des discussions sont en cours sur la manière de résoudre l'urgence. La Russie, les États-Unis et l'Union européenne (UE) déploient tous des efforts diplomatiques pour trouver une solution.

La Russie a proposé de rétablir les approvisionnements via la route Ağdam - Stepanakert puis, dans les 24 heures, de remettre les approvisionnements via le corridor de Latchine. Les États-Unis avancent l'idée d'ouvrir simultanément les deux routes tandis que l'UE explore toutes les options et est prête à soutenir toute solution que les parties pourraient accepter.

L'Azerbaïdjan a accepté les offres de la Russie et des États-Unis, mais avec une réserve selon laquelle le corridor de Latchine ne peut être utilisé que moyennant la pleine mise en œuvre de la législation azerbaïdjanaise, y compris les exigences douanières et autres. Si cela se produit, cela annulera définitivement le statut de corridor de la route de Latchine, ce qui en fera simplement une autre autoroute à l'intérieur de l'Azerbaïdjan.

L'Arménie insiste sur la restauration du couloir de Latchine conformément à la déclaration du 10 novembre 2020, qui rejette automatiquement la vision azerbaïdjanaise. Pendant ce temps, du moins publiquement, le gouvernement arménien refuse de discuter de toute question concernant le passage de fournitures depuis Ağdam. Les autorités de la République non reconnue du Haut-Karabagh rejettent toute possibilité de ravitaillement via Ağdam, soulignant que cela constituerait le premier pas vers l'intégration du Haut-Karabagh à l'Azerbaïdjan, une perspective que la majorité absolue des Arméniens vivant au Haut-Karabagh rejette avec véhémence. Ils soutiennent que si le Haut-Karabagh est placé sous juridiction azerbaïdjanaise, cela entraînera une 'désarménisation' rapide de la région, car les Arméniens ne peuvent pas vivre en Azerbaïdjan en tant que citoyens azerbaïdjanaïses étant donné la politique anti-arménienne de l'Azerbaïdjan au cours des 35 dernières années, la propagande arménienne et le niveau de haine envers les Arméniens en Azerbaïdjan. Les changements politiques survenus dans la République du Haut-Karabagh et l'élection de Samvel Shahramanian à la présidence, le 9 septembre 2023, renforceront très probablement encore cette vision des dirigeants du Haut-Karabagh, selon laquelle il n'y a actuellement aucune possibilité, même de discuter l'intégration à l'Azerbaïdjan.

Ces derniers jours, l'Azerbaïdjan a, à son tour, concentré des troupes im-



portantes le long des frontières entre l'Arménie et l'Azerbaïdjan et sur la ligne de contact entre l'Azerbaïdjan et le Haut-Karabagh. Le gouvernement arménien a fait part de ses inquiétudes quant à d'éventuelles attaques à grande échelle de l'Azerbaïdjan contre l'Arménie et/ou l'Artsakh, tout en se disant prêt à entamer des discussions avec l'Azerbaïdjan pour apaiser les tensions.

Le Premier ministre arménien Nikol Pachinian a discuté de ces questions lors de ses conversations téléphoniques du 9 septembre avec les dirigeants français et allemands.

Les tensions sans précédent dans les relations entre l'Arménie et la Russie ont rendu la situation encore plus compliquée. Dans sa déclaration du 8 septembre 2023, le ministère russe des Affaires étrangères a affirmé que les dirigeants arméniens avaient pris une série de mesures hostiles ces derniers jours, notamment le lancement du processus de ratification du Statut de Rome de la Cour pénale internationale, le voyage de l'épouse du Premier ministre arménien à Kiev avec le transfert de l'aide humanitaire à l'Ukraine et la tenue d'exercices militaires sur le territoire arménien avec la participation des États-Unis. Le 8 septembre, l'ambassadeur d'Arménie en Russie a été convoqué au ministère russe des Affaires étrangères et une note de protestation lui a été remise.

Les préparatifs manifestes de l'Azerbaïdjan en vue de lancer une nouvelle attaque à grande échelle contre l'Arménie ou/et le Haut-Karabagh, les tensions croissantes dans les relations entre l'Arménie et la Russie, les signaux indirects de l'Iran indiquant qu'il ne tolérera pas une attaque azerbaïdjanaise contre l'Arménie qui pourrait mettre en danger l'Arménie et l'Iran, les connexions terrestres, les efforts américains pour diminuer l'influence russe dans le Caucase du Sud et le changement de direction dans la République du Haut-Karabagh ont créé un équilibre géopolitique très complexe et compliqué dans la région, rendant toute solution à court terme à la catastrophe humanitaire qui se déroule dans le Haut-Karabagh encore moins probable.

Dans la situation actuelle, nombreux sont ceux qui affirment que la seule façon

Suite à la page 6

Séance spéciale du Conseil permanent de l'OSCE convoquée à l'initiative de l'Arménie

Le 20 septembre, une séance spéciale du Conseil permanent de l'OSCE a été convoquée à l'initiative de la Mission permanente de l'Arménie auprès de l'OSCE. Le représentant permanent de l'Arménie auprès de l'OSCE, l'ambassadeur Armen Papikyan, a prononcé un discours intitulé "L'agression à grande échelle déclenchée par l'Azerbaïdjan dans le Haut-Karabagh".

Dans ses remarques, Armen Papikyan a particulièrement noté que le 19 septembre, **Suite à la page 6**



La baronne Cox pense que le génocide arménien n'est pas terminé

La baronne Caroline Cox, membre de la Chambre des Lords du Royaume-Uni, a déclaré, le 15 septembre dernier, lors d'une conférence de presse à Erévan que l'Arménie était isolée, qu'elle manquait d'un soutien international important et que certains processus pouvaient être très dangereux pour le pays.

Même les alliés les plus proches de l'Arménie n'ont pas répondu aux souffrances infligées au peuple arménien, a signalé Madame Cox.

Le génocide arménien n'est probablement pas terminé, il y a des gens qui veulent mettre fin au génocide et il y a des gens qui ne peuvent pas ou ne veulent pas l'arrêter, a-t-elle déclaré.

Il est tout à fait possible que ce qui est fait en Artsakh soit également fait en Arménie après un certain temps, a ajouté Cox.

Si l'Artsakh est cédé à l'Azerbaïdjan à la suite de la signature du traité de paix sur lequel l'Arménie et l'Azerbaïdjan négocient, alors ce document ne garantira pas une paix durable, et le président azerbaïdjanais Aliiev considérera l'Arménie comme faisant partie de l'Azerbaïdjan, a-t-elle noté.

Les forces armées azerbaïdjanaises ont envahi le territoire souverain de l'Arménie. De plus, les crimes et atrocités de l'Azerbaïdjan restent impunis, a conclu la baronne Caroline Cox.



L'Iran ne permettra pas que sa route historique avec l'Arménie soit fermée

Dans une entrevue en arabe avec le journal iranien Al-Wefaq, le ministre iranien des Affaires étrangères Hossein Amirabdollahian, commentant la question du « corridor de Zangezour », a déclaré que l'Iran ne permettra pas que sa route historique dans cette région reliant l'Iran à l'Arménie soit limitée ou fermée.

Hossein Amirabdollahian a déclaré que le maintien de l'Axe de la Résistance était une politique fondamentale de la République islamique d'Iran.

Il a également noté dans l'entrevue que même si l'Iran interagit avec les pays de l'Est et de l'Ouest pour protéger ses intérêts nationaux, il n'a pas de politique « ni à l'Est ni à l'Ouest » pour maintenir son indépendance.

Le ministre des Affaires étrangères a qualifié l'Axe de la Résistance de « l'un des aspects les plus importants de notre politique étrangère ».

Amirabdollahian a noté que certains pays arabes ont normalisé leurs relations avec Israël, mais que cette décision a contraint le régime à ignorer la souveraineté de ces pays.

« Nos agences de sécurité disposent de documents détaillés démontrant que le régime sioniste ignore la souveraineté de ces pays et prend des mesures contre la sécurité de la région à leur insu », a-t-il déclaré, ajoutant : « Par conséquent, imaginer que la normalisation des relations avec le régime sioniste entraîne les avantages pour le monde islamique et les pays de la région sont loin d'être la vérité ».

Amirabdollahian a clairement indiqué que, quelles que soient les tentatives futures des pays arabes et islamiques de normaliser leurs relations avec le « régime sioniste faux et agressif », l'Iran maintiendra fermement son principe de défense de la résistance dans la région.

« Soutenir la résistance signifie garantir une région dans laquelle nous, en tant qu'Iran, vivons », a-t-il déclaré.

Dans son entretien, le ministre iranien des Affaires étrangères a également évoqué la question syrienne. Il a déclaré que les dirigeants des pays arabes, des États islamiques et de la région comprennent bien la position de la Syrie.

« La Syrie n'est pas un pays qui peut être supprimé des équations régionales », a souligné Amirabdollahian.

Sur la question de la sécurité aux frontières communes entre la Syrie et la Turquie, Amirabdollahian a déclaré que la République islamique poursuivait ses consultations avec ses frères turcs pour trouver des moyens à la fois d'apaiser les inquiétudes de la Turquie et de préserver l'intégrité territoriale de la Syrie.



La Russie est prête à poursuivre le dialogue avec l'Arménie et l'Azerbaïdjan

La partie russe est prête à poursuivre le dialogue avec l'Arménie et l'Azerbaïdjan, a déclaré aux journalistes le vice-ministre russe des Affaires étrangères Mikhaïl Golitsyne.

« Nous [la Russie] sommes toujours prêts au dialogue avec nos partenaires arméniens et azerbaïdjanais. Lorsque nous déciderons avec eux de nos prochains événements, nous en informerons certainement les journalistes », a déclaré Golitsyne en réponse à la question de savoir si la prochaine réunion des ministres des Affaires étrangères de ces pays était attendue.



Diverses options russes pour le règlement dans le Caucase

La Russie travaillera de manière cohérente avec l'Azerbaïdjan et l'Arménie. C'est ce qu'a annoncé Dmitri Peskov, porte-parole du président russe.

« La partie russe poursuit systématiquement son travail à Bakou et à Erévan et continuera à le faire. Très récemment, en effet, le premier lot de marchandises humanitaires, l'aide humanitaire, organisée grâce aux efforts de la partie russe, a été reçu. Actuellement, diverses options sont discutées et développées avec les parties ; nous poursuivons ce travail », a déclaré Peskov.



Utilisation par l'Azerbaïdjan d'un canon automatique anti-aérien

Une personne a été blessée, au Haut-Karabagh, alors que les forces armées azerbaïdjanaises violaient le cessez-le-feu et ouvraient le feu avec des armes légères et un canon automatique ZU-23-2, a indiqué le ministère de la Défense du Haut-Karabagh dans un communiqué.

La victime présente des blessures qui ne mettent pas sa vie en danger.

Les coups de feu ont eu lieu vers 18h20, le 17 septembre, dans la région de Martakert.

Le ministère de la Défense du Haut-Karabagh a déclaré avoir informé les soldats de maintien de la paix russes de la fusillade.

